ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ

<<**English Time**>> խմբակ

Խմբակը գործելու է Գուրգեն Մարգարյանի անվան թիվ 94 ավագ դպրոցի 10-12-րդ դասարանների սովորողների համար

Խմբակին անհրաժեշտ ժամաքանակը՝ շաբաթական՝ 2 ժամ/ տարեկան՝ 68 ժամ

Բացատրագիր

<<English Time>> անգլերեն առարկայի արտադասարանական խմբակի նպատակն է զարգացնել սովորողների հաղորդակցական (լսելու, խոսելու, գրելու և կարդալու) կարողությունները, ընդլայնել նրանց աշխարհայացքը, նպաստել հանրամշակութային կարողությունների ձևավորմանը: Նախատեսվում է ուսուցումն իրականացնել փուլային եղանակով՝ ընթանալով գիտելիքների յուրացումից, առանձին խոսքային գործողությունների մշակումից (բառապաշարային, հնչյունաբանական), քերականորեն ճիշտ կառուցվածք ունեցող նախադասություններից մինչև իսկ խոսքային ամբողջական գործունեություն:

Կարևորվելու է նաև լեզվական նյութի ընտրությունը՝ դրա իրադրային, հաղորդակցական և մշակութային ուղղվածությունը, ինչը կապահովի զարգացնող ուսուցում՝ առավելագույնս խթանելով աշակերտների ակտիվությունն ու ինքնուրույն մտածելու և արտահայտվելու կարողությունը:

Այսօրինակ ուսուցման ընթացքում սովորողները ոչ միայն կզարգացնեն իրենց անգլերեն լեզվով հաղորդակցական կարողությունները, այլ նաև հնարավորություն կունենան տեղեկատվություն ձեռք բերել և

փոխանակել տեղեկատվական գրականությունից, ինչը կնպաստի իրենց որևէ հանրօգուտ գործունեության ծավալմանը, ինչպես օրինակ հայալեզու մշակույթը այլ ժողովուրդներին մատչելի դարձնելը:

Խմբակի ծրագիրը կազմված է աղյուսակի տեսքով՝ հետևյալ բաժիններից.

1. Թեմայի անվանում, հատկացված ժամաքանակ
2. Նպատակներ
3. Խնդիրներ
4. Վերջնարդյունքներ
5. Բովանդակություն

Ծրագրում տեղ են գտել այն թեմաները, որոնք համապատասխանում են հանրակրթության պետական չափորոշչով ավագ դպոցի սովորողների համար սահմանված վերջնաարդյունքներից բխող կարողություններին և հետաքրքրություններին:

Ուսումնական տարվա ավարտին կկազմակերպվի ամփոփիչ բաց դաս, որտեղ աշակերտներն իրենք կներկայացնեն իրենց ստացած գիտելիքները, կկիսվեն փորձառությամբ և տպավորություններով:

Թեմայի անվանում, հատկացված ժամաքանակ **Typical Friends /Describing People/ Present Simple / 8 hours**
Նպատակներ Ձևավորել և զարգացնել հաղորդակցական կարողությունները նշված թեմաների շրջանակում: Կարողանալ նակարգրել որևէ անձի արտաքին տեսքը և բնավորության գծերը:
Խնդիրներ Կարողանալ համապատասխանեցնել պատկերները տրված արտահայտություններին: Կարողանալ աշխատել զույգերով և խմբերով՝ օգտագործելով ներկա ժամանակաձևը:
Վերջնարդյունքներ Աշակերտը կարողանա նկարագրել իր ընկերոջ բանավորության գծերը, ներկայացնել այդ գծերի նմանություններն ու տարբերությունները, հարգանքով և հանդուրժողականությամբ վերաբերվել ուրիշի կարծիքին:
Բովանդակություն Անհատ և ընկերություն, հին և նոր ընկերներ, բարեկամներ, բնավորության գծերի նմանություններ:

Թեմայի անվանում, հատկացված ժամաքանակ **English in Your Life/Modal verbs / Asking for permission / 8 hours**
Նպատակներ Պատկերացում ունենա անգլախոս երկրի պատմության, քաղաքական կառուցվածքի, կառավարման ձևի, բնակչության, պետական խորհրդանիշների և սովորույթների մասին:
Խնդիրներ Բանալի-բառերը կարողանա օգտագործել տեքստի, լսած նյութի իմաստը հասկանալու համար, կարողանա կիրառել մոդալ բայերը;
Վերջնարդյունքներ Աշակերտը ներկայացնի անգլախոս երկրի արվեստի, մշակույթի, գիտության ու գրականության նշանավոր մարդկանց: Կարևորի անգլերենի դերը արտասահմանցի հասակակիցների հետ միջազգային ծրագրերում մանսկացելու հնարավորության հարցում:
Բովանդակություն Անգլերենը որպես միջազգային լեզու, դրա ազդեցությունն անհատի վրա: Անգլերենը որպես Եվրոխորհրդի պաշտոնական լեզու: Գլոբալ կապեր և հնարավորություններ:

Թեմայի անվանում, հատկացված ժամաքանակ **The Future of work, prediction of will / 8 hours**
Նպատակներ Կարողանալ նկարագրել ընտրած ապագա մասնագիտությունը:
Խնդիրներ Սովորել կարծիք արտահայտել դերախաղի, հարցազրույցի օգնությամբ ՝ օգտագործելով ապառնի ժամանակաձևը:
Վերջնարդյունքներ Աշակերտը կարողանա ներկայացնել իր երազանքներն ու նպատակները, ապագա մասնագիտությունը՝ հիմնավորելով սեփական կարծիքը ներկա և ապառնի ժամանակաձևերում:
Բովանդակություն Իմ ապագա մասնագիտությունը, իմ երազանքները, իմ նպատակները, ֆանտաստիկայի աշխարհ (գրականություն, ֆիլմեր, հաղորդումներ)

Թեմայի անվանում, հատկացված ժամաքանակ **Body moving /Imperatives / Countable, uncountable nouns/ 8 hours**
Նպատակներ Կարողանալ ներկայացնել առողջությանն ու սննդին վերաբերող բառապաշարը, հետևել հստակ հրահանգներին և ցուցումներին:
Խնդիրներ Կարողանալ ընկալել լսված նյութի հիմնական բովանդակությունը և համարակալել իրադարձությունները հաջորդականությամբ :
Վերջնարդյունքներ Աշակերտը կարդալով կամ լսելով համապատասխան նյութը կարողանա օգտագործել այս կամ այն սարքը, հասկանա, թե ինչպես օգտվել դեղորայքից, ինչպես աղցան կամ թխվածք պատրաստել:
Բովանդակություն Սնունդ, առողջություն և սպորտ,այցելություն բժշկին, առողջ ապրելակերպ:

Թեմայի անվանում, հատկացված ժամաքանակ **Travel Essential/Past Simple regular verbs, / 8 hours**
Նպատակներ Կարողանալ նկարագրել կատարած ճամփորդությունը՝ օգտագործելով անցյալ անորոշ ժամանակաձևը:

Խնդիրներ Կարողանալ տարբերակել ճամփորդության ձևերը՝ դրանց առավելություններով և թերություններով:
Վերջնարդյունքներ Աշակերտը կարողանա ազատ հաղորդակցվել ճամփորդության թեմայի շրջանակում՝ ներկայացնելով իրադարձությունների հաջորդականությունն անցյալում:
Բովանդակություն Ես բացահայտում եմ աշխարհը, նոր երկրներ, նոր մշակույթներ, ճանապարհորդություն, երազանքներ:

Թեմայի անվանում, հատկացված ժամաքանակ **Lifetime achievements/Present perfect, Past Perfect /8 hours**
Նպատակներ Կարողանալ խոսել Հայաստանի և անգլախոս երկրների կրթական համակարգերի մասին, հասկանա և կազմի քերականորեն ճիշտ նախադասություններ ներկա վաղակատար ժամանակաձով:
Խնդիրներ Համեմատել, փոխդասավորել, ընդլայնել, համառոտել տրված նախադասություններն ու տեքստը:
Վերջնարդյունքներ Աշակերտը կարողանա տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի և անգլախոս երկրների պատմական անցյալի, ներկայի, նշանավոր մարդկանց և մշակույթների մասին:
Բովանդակություն Հայաստանի կրթական համակարգը, անգլախոս երկրների կրթական համակարգերը, Հայաստանի և անգլախոս երկրների կրթական համակարգերի նմանություններն ու տարբերությունները:

Թեմայի անվանում, հատկացված ժամաքանակ **Generation Gap/ Superlatives/go +verb-ing / 8 hours**
Նպատակներ Կարողնալ հրապարակավ ելույթ ունենալ ժամանակակից երիտասարդության երազանքների և նպատակների մասին՝ օգտագործելով ածականի համեմատական աստիճանները, ing ձևը:
Խնդիրներ Կարողանալ պատասխանել հարցերին, բազմակի ընտրություն, համեմատություն անել, կարծիք արտահայտել:

Վերջնարդյունքներ Աշակերտը կարողանա ազատ հաղորդակցվել սերունդների միջև եղած տարբերությունների մասին՝ օգտագործելով համապատասխան համեմատական և բայական կառույցները:
Բովանդակություն Երիտասարդներ և մեծահասակներ, երիտասարդություն, հեռուստատեսություն, ինտերնետ, համակարգչային տեխնոլոգիաներ, սպորտային ակումբներ:

Թեմայի անվանում, հատկացված ժամաքանակ **Media -Press TV/Possessive pronouns/ Going to/ 8 hours**
Նպատակներ Կարողանալ պատմել տեղեկատվական տարբեր աղբյուրներից քաղված տեղեկությունները, կշռադատել և դրանց վրա կատարել սեփական եզրահանգումներ:
Խնդիրներ Կաարդալ և ամբողջապես հասկանալ տեքստի հիմնական բովանդակությունը՝ աշխատելով երկլեզվյա բառարանով, կարողանալ մեկնաբանել ամսագրի հոդվածը՝ հիմնավորելով սեփական կարծիքը:
Վերջնարդյունքներ Աշակերտը կարողանա կիրառել սովորածը առօրյա հաղորդակցական իրադրություններում, ուսմնական-աշխատանքային և սոցիալ մշակութային հարթակներում: Մասնավորապես,կարողանա որոշել կարևոր իրադարձությունների շղթան: Փնտրել և գտնել անհրաժեշտ տեղեկատվություն հետաքրքրող իրադարձությունների մասին:
Բովանդակություն ԶԼՄ–ները և դրանց ազդեցությունը հասարակության վրա, հասարակական կարծիքի ձևավորում: Անգլախոս երկրների առաջատար ԶԼՄ–ները, թերթեր, ամսագրեր, կայքեր:
Ամփոփում------4 ժամ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ, ՀՂՈՒՄՆԵՐ

1. Հանրակրթության պետական առարկայական չափորոշիչների և օրինակելի ծրագրերի ՆԱԽԱԳԻԾ /Օտար լեզուներ/Անգլերեն https://escs.am/am/news/6710

2. Բաղդասարյան Ս. Անգլերեն: Ավագ դպրոցի 12-րդ դասարանի դասագիրք (հումանիտար հոսք) /Ս. https://online.fliphtml5.com/fumf/dpna/#p=193

3. Բաղդասարյան, Ս., Գյուրջայանց ,Ս. Անգլերեն: Ավագ դպրոցի 11-րդ դասարանի դասագիրք (հումանիտար հոսք) . 2010 Manmar, Երևան